

**Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**  
**Երևանի պետական համալսարանի**  
**Կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի**  
**2022 թ. հունիսի 8-ին կայացած թիվ 12 նիստի**

Գիտական խորհրդի 40 անդամներից նիստին մասնակցել են 26-ը:

**Օրակարգ՝**

1. Կենսաբանության ֆակուլտետի առկա ուսուցմամբ ասպիրանտների և հայցորդի ընթացիկ ատեստավորման հարցը:
  2. «Գենոմիկա և բժշկական բջջագենետիկա» մագիստրոսական կրթական ծրագրի ղեկավարի հաստատման հարցը:
  3. Ընթացիկ հարցեր:
1. **ԼՄԵՑԻՆ՝** Կենսաբանության ֆակուլտետի առկա ուսուցմամբ ասպիրանտների և հայցորդի ընթացիկ ատեստավորման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝** կենսաբանության ֆակուլտետի ղեկան, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆեսոր Է.Ս. Գևորգյանը, մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնի վարիչ, կ.գ.թ., դոցենտ Ա.Ֆ. Կարապետյանը, էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնի դոցենտ, կ.գ.դ. Կ.Ա. Ղազարյանը:

**Հասմիկ Վարդանի Վարդումյան** – էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնի առաջին տարվա ասպիրանտ:

2. Վարդումյանը հաշվետու ժամանակահատվածում մասնակցել է ասպիրանտական կրթական ծրագրի համար նախատեսված դասընթացների և ստացել բոլոր ստուգարքները՝ ապահովելով պարտադիր և ընտրովի դասընթացներից 31 կրեդիտ: Ատենախոսական աշխատանքների հետ կապված իրականացվել են փորձեր, որոնք այժմ ընթացքի մեջ են: Ստացված տվյալների հիման վրա պատրաստվելու է գիտական հոդված:

**Ռուզան Արսենի Շուշանյան** - մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնի առաջին տարվա ասպիրանտ:

Ռ. Շուշանյանը նշված ժամանակահատվածում հանձնել է Գերմանիայի Սաարլանդի համալսարանի և Գերմանական DAAD-ի համաֆինանսավորմամբ կազմակերպված ձմեռային կիսամյակի օնլայն մոդուլները և քննությունը՝ ստանալով 5 ECTS կրեդիտ: Մասնակցել է ասպիրանտական կրթական ծրագրի համար նախատեսված բոլոր դասընթացներին՝ ստանալով 25 կրեդիտ: Ասպիրանտի կողմից նախատեսում է գիտական հոդվածի տպագրում՝ հիմքում ունենալով նախորդ ամիսներին իրականացված լաբորատոր հետազոտությունների արդյունքները:

**Ռուզաննա Հրայրի Գևորգյան** - կենդանաբանության ամբիոնի առաջին տարվա ասպիրանտ:

Ռ. Գևորգյանը մասնակցել է դասընթացների և ստացել բոլոր ստուգարքները՝ ապահովելով պարտադիր և ընտրովի դասընթացներից պահանջվող կրեդիտները: Ատենախոսության փորձարարական մասն իրականացնելու համար կատարվել է նյութի նմուշառում և փորձանմուշների ստուգում: Ասպիրանտի կողմից համապատասխան ծրագրերի միջոցով կատարվում է ստացված արդյունքների մշակում և պատրաստվում է գիտական հոդված:

**Լիանա Մանվելի Վանյան** - կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի առաջին տարվա ասպիրանտ:

Լ. Վանյանը հաշվետու տարվա ընթացքում պարտադիր և ընտրովի դասընթացներից հավաքել է 32 կրեդիտ և տպագրել 1 հոդված և 6 թեզիս:

**Մերի Կարենի Իսկանդարյան** - կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի առաջին տարվա ասպիրանտ:

Մ. Իսկանդարյանը պարտադիր դասընթացներից հավաքել է 12, իսկ ընտրովի դասընթացներից՝ 18 կրեդիտ: Ներկայացրել է տպագրության 2 թեզիս:

**Անահիտ Համբարձումի Շիրվանյան** - կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի երկրորդ տարվա ասպիրանտ:

Ա. Շիրվանյանը պարտադիր և ընտրովի դասընթացներից հավաքել է անհրաժեշտ կրեդիտների քանակը և տպագրել է 1 հոդված ու 3 թեզիս:

**Լուսինե Տերդինանտի Գասպարյան** - կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի հայցորդ:

Լ. Գասպարյանը պարտադիր և ընտրովի դասընթացներից հավաքել է 24 կրեդիտ և տպագրել է 3 հոդված:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** հաշվի առնելով 2021-2022 թթ. ստկա ուսուցմամբ ասպիրանտների և հայցորդի կատարած աշխատանքը և ամբիոնների կարծիքները՝ ատեստավորել ասպիրանտներին և հայցորդին:

2. **ԼՍԵՑԻՆ՝** ԵՊՀ Կենսաբանության ֆակուլտետի գենետիկայի և բջջաբանության ամբիոնի «Գենոմիկա և բժշկական բջջագենետիկա» մագիստրոսական կրթական ծրագրի ղեկավարի հաստատման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝** կենսաբանության ֆակուլտետի ղեկան, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆեսոր Է.Ս. Գևորգյանը, գենետիկայի և բջջաբանության ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ Ռ.Մ. Հարությունյանը: Ելույթների ժամանակ կարևորվեց ԵՊՀ Կենսաբանության ֆակուլտետի գենետիկայի և բջջաբանության ամբիոնի «Գենոմիկա և բժշկական բջջագենետիկա» մագիստրոսական կրթական ծրագիրը, նշվեցին ծրագրի արդիականությունը և հեռանկարները: Նիստի ժամանակ որպես մագիստրոսական ծրագրի ղեկավար առաջադրվեց գենետիկայի և բջջաբանության ամբիոնի պրոֆ., կ.գ.դ. Գալինա Գեորգիի Հովհաննիսյանի թեկնածությունը:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** հաստատել Գալինա Գեորգիի Հովհաննիսյանի թեկնածությունը որպես «Գենոմիկա և բժշկական բջջագենետիկա» մագիստրոսական կրթական ծրագրի ղեկավար:

3. **Ընթացիկ հարցերի** շրջանակում քննարկվեց ԵՊՀ ուսումնական գործընթացի կազմակերպման նոր կարգի վերաբերյալ հարցեր, պարզաբանվեց գնահատման համակարգի հիմնադրույթները, ըստ դասընթացների նշվեց գնահատման բաղադրիչների կշիռը և հատկացվող առավելագույն միավորները, ներկայացվեց ուսանողների մասնակցության գնահատման սանդղակի օրինակ: Խոսվեց նաև քննությունների վերահանձնման և դասընթացների կրկնման սկզբունքների մասին: Տեղի ունեցավ ծանոթացում դասընթացների նոր տեղեկագրերի հետ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ծանոթանալով ԵՊՀ ուսումնական գործընթացի կազմակերպման նոր կարգի հետ, սահմանված ժամկետներում ներկայացնել և համապատասխան հարթակում տեղադրել դասընթացների համար ընտրված ձևաչափով նկարագրիչները և մասնագրերը:

Գիտական խորհրդի նախագահ՝  
ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆ.



Բ.Ս. Գևորգյան

Գիտական խորհրդի քարտուղար՝  
դոցենտ՝

Ի.Վ. Շահազիզյան

13.06.22թ.